ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ «ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՄԱՅՐԵՆԻԻ ԴԱՍԵՐԻՆ»

ԹԻՎ 74 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԴԱՍՎԱՐ՝
ԱԼՎԱՐԴ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՂԵԿԱՎԱՐ՝ ԵԼԵՆԱ ՋԻԼԱՎՅԱՆ

Երևան – 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն----------1-5

Գործնական աշխատանքների կազմակերպումը մայրենիի

ուսուցման գործընթացում----------6-21

Եզրակացություն----------22

Գրականության ցանկ----------23

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Աշխատանքի մեկ ժամն ավելի շատ բան է սովորեցնում,

քան բացատրությունների մեկ օրը, քանզի եթե ես երեխային

զբաղեցնում եմ արհեստանոցում, նրա ձեռքերն աշխատում են

հոգուտ նրա խելքի, նա դառնում է փիլիսոփա՝ իրեն համարելով

սոսկ արհեստավոր։

ԺԱՆ-ԺԱԿ ՌՈՒՍՈ

Անժխտելի է, որ ճանաչողության հիմքը պրակտիկան է։ Ուստի, աշակերտներին պետք է հասկանալի դարձնել այն, որ տեսական հետազոտությունները կատարվում են ոչ միայն հանուն գիտության, այլև հանուն պրակտիկ գործունեության զարգացման, հանուն մարդկանց կենսապայմանների ապահովման և բարելավման։

Պրակտիկայում առաջադրված խնդիրներն են, որ լուծվում են տարբեր գիտությունների միջոցով։ Ավելին, այդ խնդիրների գիտական լուծումները փորձարկվում և ներդրվում են պրակտիկայում։ Աշակերտին պետք է հասկանալի դարձնել տեսական հասկացությունների իմացության կարևորությունն ու նշանակությունը մարդու պրակտիկ գործունեության մեջ։ Նա պետք է հասկանա, թե որքան կարևոր է ձեռք բերած տեսական գիտելիքները կյանքում հանդիպող առօրյա իրադրություններում կիրառել կարողանալը։

Աշակերտների մեջ նման կարողությունն ինքնաբերաբար հանգեցնում է գործնական կարողության ձևավորմանն ու զարգացմանը։ Ըստ այդմ՝ գործնական աշխատանքներն ուսումնառության որակի հիմնական և գլխավոր ցուցանիշներն են ողջ կյանքում։ Հետևաբար ուսուցիչն ուսումնական գործընթացը կազմակերպելիս և իրականացնելիս հիմնական շեշտը պետք է դնի նաև աշակերտների մեջ գործնական կարողությունների ձևավորման և զարգացման հարցերի վրա։ Հենց այդ տեսանկյունից է, որ արժևորվում է գործնական աշխատանքի դերը ոչ միայն որպես տեսական նյութի ամրապնդման միջոցի,այլև որպես սովորածը գործնականում կիրառելու հնարավորության։

Կոնկրետ խնդիրներով ու բովանդակությամբ պայմանավորված՝ գործնական աշխատանքներն իրականացվում են ինչպես դասերի ժամանակ, այնպես էլ դասերից դուրս:

Գործնական անվանում են սովորողների կողմից կատարվող այն աշխատանքները, որոնք վերաբերում են նրանց ձեռք բերած գիտելիքների և հմտությունների գործնական կիրառություններին:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Զնավորել և զարգացնել սոցիալական հմտություններ:

Մատուցել կիրառման համար անհրաժեշտ տեսական և գործնական նյութ:

Նպաստել սովորողի ինքնադրսևորմանը, կենսագործունեությանը և կրթության շարունակականության ապահովմանն ուղղված հմտությունների զարգացմանը:

Գործնական կարող ենք համարել այն աշխատանքները, որոնց համար բացի թուղթ ու գրիչից օգտագործվում են այլ միջոցներ: Գործնական են ուսումնական փորձերն ու լաբորատոր աշխատանքները, ինչպես նաև ուսումնական գործընթացում նախատեսվող ֆիզիկական պատրաստվածությունն ու այլ ֆիզիկական աշխատանքներ:

Գործնական աշխատանքների սահմաններն ընդարձակ են, որոնք իրենց մեջ ներառում են նաև աշակերտների կողմից կատարվող հետազոտական աշխատանքներն ու նախագծային գործունեությունը.

- **գիտելիքների որոնում,**
- **իմաստավորում,**
- **ընդհանրացում և համակարգում,**

•**կարողությունների և հմտությունների ձևավորում ու զարգացում։**

Գործնական աշխատանքների կազմակերպումը մեծացնում է սովորողների ակտիվությունը և ինքնուրույն աշխատելու կարողությունը, նպաստում է գիտելիքների ընդլայմանը, բարդ հասկացությունները դարձնում է հասկանալի, մատչելի և տեսողական։ Գործնական աշխատանքներ կիրառվում են բոլոր ուսումնական առարկաների շրջանակում, որոնք իրականացնում են՝ նկատի ունենալով տվյալ առարկայի չափելի վերջնարդյունքները, ինչով էլ պայմանավորված են առաջադրանքների ընտրությունն ու տեսակը։ Գործնական դասերն ավելի արդյունավետ են, երբ միավորում են առարկաները՝ մաթեմատիկան և տեխնոլոգիան, ես և շրջակա աշխարհն ու արվեստը, ընթերցանությունն ու երաժշտությունը և այլն։ Կարևոր է նաև արտադասարանական գործունեության մեջ գործնական առաջադրանքների ընտրությունը՝ առարկայի նկատմամբ հետաքրքրությունը պահպանելու համար։

Գործնական աշխատանքն իրենից ենթադրում է մի կողմից ուսումնական առաջադրանք, այսինքն, այն, ինչ պետք է անի աշակերտը, մյուս կողմից՝ այդ առաջադրանքի կատարման ընթացքում համապատասխան գործունեության հիշողության, մտածողության, ստեղծագործական երևակայության դրսևորման ձև, որն արդյունքում աշակերտին տալիս է միանգամայն նոր, նախկինում նրան անծանոթ գիտելիք, կամ էլ՝ արդեն ունեցած գիտելիքների խորացում։

Գործնական աշխատանքներն արդյունավետ իրականացնելու համար ուսուցիչը պետք է՝

- նախապատրաստական աշխատանք տանի աշակերտների հետ, որպեսզի նրանք ոչ միայն իմանան տեսական այն նյութը, որի հիման վրա պետք է կատարեն գործնական աշխատանքը, այլև ծանոթ լինեն այն իրականացնելու հնարներին ու միջոցներին,
- ապահովի աշակերտներին ԳԱ իրականացնելու համար անհրաժեշտ միջոցներով (ուսումնական օժանդակ նյութ, մոդելներ, գործիքներ, սարքեր և այլն),
  - վերահսկի աշխատանքի կատարման ընթացքը, անհրաժեշտության դեպքում ինքը ևս ներգրավվի այդ աշխատանքում,

- վերլուծի և գնահատի կատարված աշխատանքը:

Սկզբնական փուլում ցանկալի չէ փորձել իրականացնել գործնական աշխատանքների բարդ տեսակներ. պետք է պարզ աշխատանքների իրականացումից աստիճանական անցում կատարել դեպի բարդերը: Նման մոտեցումը կօժանդակի աշակերտների մեջ պարզագույն այնպիսի հմտությունների ձևավորմանը, որոնք անհրաժեշտ են լինելու առավել բարդ առաջադրանքներ կատարելիս՝ ընդհուպ ինքնուրույն որոշակի հետազոտական աշխատանքների ժամանակ:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

1. Ցանկացած ԳԱ պետք է ունենա կոնկրետ նպատակ:

2. Երեխաները պետք է կարող անան կիրառել իրենց մինչ այդ յուրացրած գիտելիքներն ու կարողությունները:

3. Յուրաքանչյուր աշակերտ պետք է իմանա կատարման ընթացքը և պետք է յուրացնի ինքնուրույն գործելու հնար

4. ԳԱ պետք է համապատասխանի սովորողների կարողություններին:

5. ԳԱ ընթացքում ստացված արդյունքները կամ եզրահանգումները պետք է կիրառվեն ուսումնական գործընթացում:

6. Անհրաժեշտ է ապահովել տարբեր տեսակի գործնական վարժությունների համադրումը:

7. ԳԱ բովանդակությունն ու քայլաշարը պետք է առաջացնի հետաքրքրություն:

8. ԳԱ պետք է ապահովի սովորողների ճանաչողական կարողությունների

9. ԳԱ բոլոր տեսակները պետք է ապահովեն ինքնուրույն ճանաչողական գործունեություն ծավալելու կարողությունը:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՄԱՅՐԵՆԻԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

I. ԳԱ բովանդակությունն ու մեթոդները

Երեխայի ուսուցման նպատակն է նրան ընդունակ դարձնել

հետագայում զարգանալու՝ առանց ուսուցչի օգնության:

Էլբերթ Հաբարդ

Սովորողներին ներկայացվող չափորոշչային և ծրագրային պահանջների համաձայն՝ մայրենիից նախատեսվում են տարբեր բնույթի ու տիպի գործնական աշխատանքներ.

- պատմության գծապատկերի կազմում՝ նախադասությունների համար գունային բաժանումներով,
- տառերի, վանկերի կազմության գծապատկերներ,
- դասանյութերի մասերին համապատասխան բովանդակային կառուցվածքի գծակարգ,
- տեքստի սխալների ուղղում, խառնված հերթականության շտկում,
- գործնական գրություններ՝ նամակ, հասցե, հայտարարություն,
- գովազդային վահանակ, դասարանական թերթ ստեղծելու և ձևավորելու աշխատանքներ,
- տեքստի նկարազարդում,
- հեքիաթների հորինում, ինքնաշեն գրքերի նկարազարդում,
- զանազան տեղեկատվական աղբյուրներից (բառարաններ, մանկական հանրագիտարաններ, ուսումնական ձեռնարկներ), որոնել, գտնել տեղեկություններ առաջադրված հարցերին պատասխանելու համար(նախագծային մեթոդ)։

2. Գործնական աշխատանքներն 1-ին դասարանում

Դպրոցական ուսումնառության հենց առաջին օրերից սկսած՝ կարևոր է, որ երեխան դառնա ուսումնական գործընթացի ակտիվ մասնակիցը։ Երեխային գործնական աշխատանք կատարելուն նախապատրաստելը, նրան համապատասխան կարողություններ և հմտություններ ուսուցանելը առաջին դասարանում դասավանդող ուսուցչի կարևորագույն խնդիրն է։ Ուսուցչի աշխատանքը նպատակաուղղվում է սովորողների գործնական կարողությունների զարգացմանը՝ որպես ճանաչողական հետաքրքրության զարգացման և ուսումնական գործունեության նկատմամբ դրդապատճառների ստեղծման միջոց։

Այդ նպատակաուղղված աշխատանքի ընթացքում լուծվում են հետևյալ խնդիրները.

1	Ճանաչողական գործընթացների զարգացում	Մտածական գործընթացների զարգացում
	երևակայություն ընկալում հիշողություն	համեմատում վերլուծություն և գլխավորի առանձնացում նյութի ամփոփում և համակարգում հակասությունները տեսնելու կարողություն և այլն
2	Հետազոտական կարողությունների ձևավորում և զարգացում	
	1. տեսնել անսովորը 2. ձևակերպել խնդիրը 3. ապացուցել գաղափարը 4. ձևավորել հետազոտական աշխատանքի արդյունքները	
3	Ինքնակրթության կարողությունների ձևավորում	
4	Սովորողների գրավոր և բանավոր խոսքի զարգացում	
5	Համագործակցային և հաղորդակցական կարողությունների զարգացում	

1-ին դասարանը գործնական կարողությունների զարգացման առաջին փուլն է: ԳԱ կրում է այս դասարանում սոսկ ուսուցանող բնույթ: Վերոնշյալ խնդիրների լուծման համար նպատակահարմար է հանձնարարել երեխաներին հետևյալ վարժությունները.

- Շարունակել անավարտ պատմվածքը, հեքիաթը:
- Հորինել պատմվածք որևէ հերոսի անունից:
- Նկարագրիր քո երևակայական կյանքի մեկ օրը կամ օգտագործելով ուսուցչի կողմից տրված վերջաբանով՝ հորինիր պատմվածք:
- Որոշել, թե որքան գործողություններ կարելի է կատարել որևէ առարկայի հետ:
- Որևէ առարկայի համար անվանել որքան հնարավոր է շատ հատկանիշներ և այլն:
- Եկե՛ք՝ միասին մտածենք, թե ինչու ամռանը սարերի վրայի ձյունը չի հալվում:
- Ինչու՞ են երեխաները սիրում խաղալ համակարգչային խաղեր և այլն:

Յուրաքանչյուր ճանաչողական գործընթաց սկսվում է հարցադրումներից: Այդ նպատակով տրվում են մարդկանց, կենդանիների պատկերներով նկարներ, և երեխաներին առաջարկվում է պատասխանել տրված հարցերին: Կամ տրվում է առաջադրանք.

- Ի՞նչ հարցեր կօգնեն քեզ նոր տեղեկություններ իմանալու տրված առարկայի մասին:

Հավելենք նաև, որ արդեն 1-ին դասարանից սովորողներին անհրաժեշտ է վարժեցնել հետազոտական գործունեության հետևյալ փուլերին.

1.Մտածել ինքնուրույն
2.Հարցնել մեկ ուրիշից
3.Կարդալ գրքերում
4.Դիտել հեռուստատեսություն
5.Տեղեկություն ստանալ համացանցից
6.Կատարել դիտարկումներ
7.Մեկնաբանել փորձեր
8.Հարցնել համապատասխան մասնագետներից

3. ԳԱ 2-4 րդ դասարաններում

2-րդ դասարանից սկսած՝ արդեն կարելի է առաջադրել գործնական աշխատանքներ, որոնք կառուցված կլինեն մի շարք գործնական վարժություններից: 2-4-րդ դասարաններում գործնական աշխատանքները նպաստում են ոչ միայն յուրացված գիտելիքների գործնական կիառման կարողությունների զարգացմանը, այլև սովորողների այնպիսի մտածողական գործընթացների զարգացմանը, ինչպիսիք են՝

- դասակարգումը,
- ամփոփումը,
- տարբեր հնարավոր որոշումների ընտրությունը,
- իր աշխատանքի գործողությունների ծրագրի կազմումը,
- միևնույն իրը կամ երևույթը տարբեր տեսանկյուններից դիտարկումը,
- տարբեր իրերի կամ երևույթների համեմատումը,
- ինքնաստուգումը և այլն:

ԳԱ արդյունավետ իրականացումը կախված է մտածողության այս գործընթացների ճշգրիտ կազմակերպումից: 2-4-րդ դասարաններում, բացի ուսուցանող նպատակով տրված գործնական աշխատանքներից, տրվում են նաև միավորային գնահատմամբ գործնական աշխատանքներ: Այդ գործնական աշխատանքների գնահատումն իրականացվում է՝ աշակերտի հավաքած միավորների քանակն արտահայտելով 10-միավորային գնահատանիշերով՝ ըստ տրված չափանիշների:

Կրտսեր դպրոցականներին մայրենիից տրվող գործնական աշխատանքները մեծ հաշվով կարելի է անվանել **ստեղծագործական-հետազոտական աշխատանքներ**: Հետազոտական գործունեության ընթացքում սովորողը սովորում է ***դիտարկել, խորհել, համեմատել, պատասխանել հարցերին, կատարել եզրահանգումներ, վերականգնել պատճառահետևանքային կապը և այլն: ՀԳ կազմակերպման ընթացքում սովորողները պետք է կիրառեն տարբեր մեթոդներ և հնարներ:***

հ/հ	**Հետազոտական գործունեության առանձնահատկությունները**
1	Նպատակաուղղված է այնպիսի գիտելիքների յուրացմանը, որոնք հետաքրքրում են սովորողներին և ծրագրային պահանջների շրջանակում չեն:
2	Օգնում է յուրացնելու այնպիսի հետազոտական կարողություններ, որոնք անհրաժեշտ են նրան ողջ կյանքի ընթացքում:
3	Զարգացնում է հաղորդակցական կարողությունները:
4	Ընթանում է ուսուցչի և սովորողների ստեղծագործական համագործակցությամբ:

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՔԱՅԼԱՇԱՐԸ

1. Նախապատրաստական աշխատանք հարցի տեսական կողմի ուսումնասիրման նպատակով (էքսկուրսիաներ, դիտարկումներ, զրույցներ, ընթերցումներ, նկարագրող նյութերի դիտում, տեղեկությունների գրառում), հետազոտության թեմայի, տիպի, տեսակի

2. Սովորողների հետ միասին աշխատանքի նպատակի, խնդիրների

3. Ուշադրության, ընկալման, հիշողության, տրամաբանական և ստեղծագործական մտածողության զարգացման նպատակով խաղային տեխնոլոգիաների կիրառում:

4. Ուսումնական միջոցների և սարքավորումների ընտրություն և նախապատրաստում՝ սովորողների տարիքին, ուսումնասիրվող թեմային համապատասխան:

5. Հետազոտական աշխատանք ուսումնական միջոցների, սարքավորումների

6. Տարբեր ձևերով դիտարկումների արդյունքների ամփոփում (դիտարկումների օրագիր, կոլաժներ, աղյուսակներ, լուսանկարներ, գծակարգեր, հեքիաթներ, պատմվածքներ, նկարներ և այլն)՝ սովորողներին ինքնուրույն եզրահանգումներ կատարելուն մղելու նպատակով:

Տարրական դասարաններում գրեթե բոլոր ՀԱ կրում են կոլեկտիվ բնույթ. թեմատիկան որոշում է ուսուցիչը, բայց յուրաքանչյուր աշակերտ իր ավանդն է ներդնում ընդհանուր գործի մեջ: Այն սովորեցնում է երեխաներին աշխատել կոլեկտիվում, ընդհանուր հետաքրքրությունները վեր դասել սեփականից: Արդեն 4-րդ դասարանում շատ աշակերտներ կարող են ինքնուրույն ընտրել հետազոտության թեման: Ուսուցիչը պետք է միայն ուղղորդի նրանց ճիշտ ընտրության հարցում՝ առաջարկելով մտածել տրված հարցերի պատասխանների շուրջ:

Թեման կարող է լինել.

1. **Երևակայական** /սովորողը կարող է առաջ քաշել երևակայական վարկած/
2. **Փորձարարական**
3. **Հայտնագործական**
4. **Տեսական**

Հետազոտության կազմակերպումն ընդգրկում է 7-րդ էջում նշված փուլերով, որոնց բովանդակության մեջ ներառված են հետևյալ հանձնարարականները.

1.Ինքնուրույն մտածել

- Ի՞նչ գիտեմ ես այդ
- Ի՞նչ մտքեր կարող եմ արտահայտել այդ
- Ի՞նչ եզրահանգումներ կարող եմ կատարել ինձ հայտնի տեղեկություններից

2. Թեմայի վերաբերյալ կարդալ գրքեր, թերթեր, ամսագրեր

- Գրել այն կարևոր տեղեկատվությունը, որի մասին տեղեկացար գրքերից, թերթերից կամ ամսագրերից

3. Հարցնել մեկ ուրիշից

Գրել այն կարևոր տեղեկատվությունը, որը ստացար ուրիշից

4. Դիտել հեռուստանյութեր

Գրել այն ամենը, ինչի մասին իմացար հեռուստացույցից

5.Օգտագործել համացանց

Գրել այն ամենը, ինչի մասին իմացար համացանցից

6.Դիտարկել

Գրել այն հետաքրքիր,զարմանալի տեղեկատվությունը, որը ստացար դիտարկումների շնորհիվ: Հնարավորության դեպքում կատարել նկարահանումներ

7. Անցկացնել փորձեր

Գրառել փորձերի արդյունքները

Հետազոտական աշխատանքները դասակարգվում են՝

- ըստ սովորողների քանակի՝ ***անհատական, զույգով, խմբային,***
- ըստ անցկացման վայրի՝ ***դասարանական և արտադասարանական,***
- ըստ ժամանակի՝***երկարատև, կարճատև,***
- ըստ թեմայի՝ ***առարկայական և ազատ,***
- ըստ խնդրի՝***դասի ընթացքում ուսումնասիրված ծրագրային նյութի յուրացման խորացում և հարցեր, որոնք ծրագրային նյութ չեն***

Մայրենիի դասերին հաճախակի կիրառվում է նաև ***նախագծերի մեթոդը կամ նախագծային աշխատանքը, որի էությունն այն է, որ սովորողները, իրենց հետաքրքրությունից ելնելով, ուսուցչի հետ միասին իրականացնում են նախագիծ՝ լուծելով որևէ հետազոտական խնդիր:***

4. Նախագծի մեթոդի կազմակերպումն ու անցկացումը մայրենիի դասերին.

Նախագծային և հետազոտական գործունեությունները սկզբունքորեն տարբեր են իրենց ուղղություններով, բնույթով և գործունեության տեսակների բովանդակությամբ,սակայն տարբերությունների հետ մեկտեղ ունեն նաև ընդհանրություններ: Ըստ այդմ՝ տարրական դասարաններում նպատակահարմար է նախագծային և հետազոտական գործունեությունը միավորել և անցկացնել ***նախագծային-հետազոտական գործունեություն՝ ՆՀԳ*** */վերոնշյալ էջերում մանրամասն ներկայացված են նպատակի, խդիրների, պլանավորման առանձնահատկությունների սխեմաները/:*

5. Ինչպես կազմակերպել սովորողների խմբային և ինքնուրույն աշխատանքները

Աշխատանքն սկսելուց առաջ յուրաքանչյուր խմբի ավագին տրվում է սխեմա.

- խնդիրներ /ստեղծել, անցկացնել, ապահովել, մասնակից դարձնել, պատրաստել, կատարել. . /
- գործունեության մեթոդներ, տեսակներ
- վերջնարդյունքներ։

Ավելի լավ արդյունք ստացվում է խմբային, կոլեկտիվ աշխատանքներում, որոնք ուղղված են կոնկրետ խնդիրների լուծմանը։ Հատուկ ուշադրություն պետք է դարձնել.

- դերերի հարաբերակցությանը,
- նպատակների հստակությանը,
- յուրաքանչյուր մասնակցի առջև դրված խնդիրների համաձայնեցմանը,
- արժեքների միասնականությանը,
- կոնֆլիկտային իրավիճակներից դուրս գալու կարողության զարգացմանը,
- փոխադարձ վստահությանը,
- աշխատանքի կատարման համապատասխան մեթոդների մշակմանը,
- ուսուցչի կողմից արդյունավետ ղեկավարման ապահովմանը,
- կատարված աշխատանքների հաշվետվությանը,
- յուրաքանչյուր սովորողի անհատական առանձնահատկությունների հաշվառմանը,
- հաղորդակցական հմտությունների զարգացմանը։

Սովորողների, ուսուցչի և ծնողի դերը ՆԳ ընթացքում՝ ըստ աղյուսակի

Սովորողի դերը	Ուսուցչի դերը	Ծնողի դերը
1. Որոշում է գործունեության նպատակը 2. բացահայտում է նոր գիտելիքներ 3. փորձարկում է 4. ընտրում է լուծման ուղիներ 5. ակտիվ է 6. ուսուցման սուբյեկտ է 7. պատասխանատվություն է կրում իր գործունեության համար	1. Օգնում է որոշելու 2. խորհուրդ է տալիս տեղեկատվության աղբյուրներ 3. բացահայտում է աշխատանքի հնարավոր ձևեր 4. նպաստում է արդյունքների կանխատեսմանը 5. պայմաններ է ստեղծում սովորողի ակտիվության համար 6. սովորողի գործընկերն է 7. օգնում է գնահատելու ստացված արդյունքը, բացահայտելու թերությունները	1. Տալիս է խորհուրդներ 2. հետևում է պլանի կազմմանը 3. օգնում է նախնական գնահատել նախագիծը 4. մասնակցում է ներկայացման նախապատրաստմանը 4. ապահովում է առավել համապատասխան աշխատանքի կանոնակարգ, հանգիստ և սնունդ

Որպեսզի աշխատանքն ավելի արդյունավետ ընթանա, անհրաժեշտ է պահպանել եռյակի համար նախատեսվող ***հուշագրում ներկայացված պայմանները։***

6. Նախագծի վերջնական արդյունքի ներկայացում

Տարրական դասարաններում հատուկ ուշադրություն է պահանջում ՆԳ եզրափակիչ փուլը՝ նախագծի շնորհանդեսը: Նախագծի գաղափարը, նպատակներին խնդիրների շուրջ տարվող աշխատանքը, ինչպես նաև այն ոգևորությունը, որն ուղեկցել է ամբողջ աշխատանքի ընթացքում, պետք է արտացոլեն նախագծի արդյունքում /կարող է լինել գիրք, ալբոմ, խտասկավառակ, որևէ միջոցառման սցենար, ֆիլմ և այլն/:

Կրտսեր դպրոցականների ՆԳ հնարավոր արդյունքներն են.

- բեմականացումները / նաև տիկնիկային/,
- համերգները,
- ամսագրերը,
- վիկտորինաները և խաղերը,
- նկարների թեմատիկ ցուցադրումները,
- թերթերը, ամսագրերը, գրքերը,
- տեսաֆիլմերը,
- մանրակերտները,
- խաղալիքները և այլն:

Անհրաժեշտ է, որ սովորողներն ըմբռնեն իրենց ստացած արդյունքների անհրաժեշտությունը: Շնորհանդեսի հիմքում ընկած է հսկայական ուսումնադաստիարակչական արդյունք.

- սովորողները սովորում են հիմնավորված շարադրել իրենց մտքերը,
- վերլուծել իրենց գործունությունը,
- ներկայացնել կատարած անդրադարձի արդյունքը,
- խմբային և անհատական ինքնուրույն աշխատանքների արդյունքը,
- յուրաքնչյուր սովորողի ներդրած ավանդի վերլուծության արդյունքը:

Շատ կարևոր է, որ սովորողները պատմեն, թե ինչպես աշխատեցին նախագծի շուրջ, աշխատանքի ընթացքում պատրաստված ցուցադրությունները և զննական նյութերը, անկասկած, կխոսեն յուրացված գիտելիքների գործնականում կիրառելու կարողությունների մասին: Հենց արդյունքի տեսակն էլ որոշում է շնորհանդեսի ներկայացման ձևը, որի անցկացման ***մանկավարժական նպատակն է ներկայացման կարողությունների և հմտությունների մշակումը, զարգացումը կամ ստուգումը:***

7. Մեթոդական երաշխավորություններ վերջնարդյունքների գնահատման չափանիշների մշակման վերաբերյալ

Կարևոր հարց է նախագծի արդյունքների գնահատումը, որը պետք է լինի խթանող: Ի դեպ՝ տարրական դպրոցում պետք է խրախուսվի յուրաքանչյուր աշակերտ, ով մասնակցել է նախագծի իրականացմանը: Անձնական պարգևներից բացի՝ կարելի է պարգևատրել ողջ դասարանին՝ նախագծի բարեհաջող ավարտի կապակցությամբ:

Միավորային գնահատման նպատակով իրականացվող նախագծի արդյունքները գնահատվում են ըստ գործնական աշխատանքի համար նախատեսված չափանիշների: Նախագծի գնահատման ընթացքում հաշվի է առնվում բովանդակությունը, գեղարվեստական ձևավորումը, շնորհանդեսի ձևը, ստեղծագործական մոտեցումը, սովորողի ներդրման չափը խմբային գործունեության ընթացքում:

Անհրաժեշտ է գնահատել.

Գործնական աշխատանքի թեման՝ **«Մեր անցած նյութերի հեղինակները»**
/երրորդ դասարան/

ԳԱ մեկնարկը /տևողությունը/՝ 4 շաբաթ

Անցկացման վայրը՝ դասարան, գրադարան, թանգարաններ

ԳԱ տիպը՝ ստեղծագործական-հետազոտական աշխատանք /նախագծային-հետազոտական գործունեություն՝ՆՀԳ/

ԳԱ տեսակը՝ անհատական/ ինքնուրույն/, խմբային, կոլեկտիվ:

Մեթոդների և հնարների կիրառումը՝ համագործակցային, ինտեգրման, հետազոտական, դիտարկում և տեղեկատվության հավաքագրում, ճամփորդություն, բեմականացում և այլն:

Նպատակը՝

- պահպանել կրթական մակարդակների դրսևորումները. լեզվամտածողության, ճանաչողական որակների, ստեղծագործական մտածողության հմտությունների ու գիտելիքների, գեղագիտական, ճաշակի ընկալման, միջանձնային ու ներանձնային

հատկանիշների դրսևորումներ,

- ճանաչել հայ մանկագիրներին և նրանց մասին հավաքել ու մշակել տվյալներ՝ ներկայացնելով ձևավորված ալբոմի տեսքով կամ ,,Հրաշք տետրում,,
- համադրել, ընդհանրացնել տեղեկատվությունը՝ օգտվելով տարբեր տեղեկատվական աղբյուրներից,
- ընդլայնել հեղինակների ստեղծագործությունների ճանաչողությունը՝ բեմադրելով որոշ հատվածներ և բնութագագրելով սիրված հերոսներին։

Խնդիրները՝

- Սովորողները կաշխատեն՝ ըստ ուսուցչի տված հուշաթերթիկի /պլան-հուշագիր/
- աշակերտներն այլ աղբյուրներից տեղեկություն կհավաքեն նշված բանաստեղծների, գրողների կյանքի, գործունության, նրանց ստեղծագործությունների մասին/ըստ դասագրքի թեմաների և արտադասարանային ընթերցանության նյութերի/,
- կդրսևորեն հետաքրքրություն ստեղծագործություններում արծարծված գաղափարների նկատմամբ,
- Բնութագրիչ հատկանիշներով կտարբերեն և կներկայացնեն ժանրային տեսակները /պատմվածք, բանաստեղծություն, հեքիաթ, առակ, հանելուկ, առած-ասացվածք և այլն/,
- կզարգանան աշակերտների հաղորդակացական ունակությունները, հետաքրքրասիրական և ստեղծագործական կարողությունները, կհարստանան բառապաշարը, գրավոր ու բանավոր խոսքը,
- Կձևավորվի աշակերտների՝ ցանկացած աշխատանք կատարելու քայլաշարի մշակման կարողությունը,
- Կկարողանա ճիշտ օգտագործել ԳԱ համար տրամադրված ժամանակը
- Հարգանք ու հանդուրժողականություն կդրսևորեն խմբերի անդամները մեկը մյուսի նկատմամբ՝ արժևորելով մարդկային դրական հատկանիշները։

Կահավորումը՝

- Դիմանկարներ/Ղ. Աղայան, Հ. Թումանյան, Աթ. Խնկոյան, Հ, Հայրապետյան, Ս. Կապուտիկյան, Մ. Կորյուն, Ս. Մուրադյան, Լ. Սարգսյան, Ա. Պարսամյան, Յ. Սահակյան, Պ.Խաչատրյան/
- Ըստ աշակերտների քանակի/34 աշ./՝ թղթերի հավաքածու, որտեղ գրված են հեղինակների և նրանց ստեղծագործությունների մասին/համակարգչային տարբերակով/
- Ցուցապաստառներ, գունավոր թղթեր, նկարներ և լոսանկարներ, հրաշք տետրեր, ալբոմներ, հարցաթերթիկներ, հուշագրեր
- Համացանցից ընտրած երիզներ, որտեղ խոսում և ասմունքում են հեղինակները կամ ասմունքողները և այլ անհրաժեշտ նյութեր։

Ընթացքը՝ ըստ փուլերի

Նախապատրաստական փուլ(Իշաբաթ). սովորողները բաժանվում են 4 կենտրոնի /խմբի/.

1. հետազոտողների կենտրոն
2. ստեղծագործական կենտրոն
3. բացահայտողների կենտրոն
4. գրավոր աշխատանքի կենտրոն

Որոշվում են կենտրոնների պատասխանատուները՝ սովորող, դասավանդող, ծնող(էջ 11-ում աղյուսակով մանրամասն ներկայացված է եռյակի դերը),քննարկվում են իրենց անելիքները՝ ըստ տրված հուշաթերթիկի, որը նպաստում է ԳԱ արդյունավետությանը.

Հարցեր, առաջադրանքներ, հանձնարարա կաններ	Հ ի շ ե ց ո ւ մ
1. Համառոտ տեղեկություններ հավաքել նշված մանկագիրների կենսագրությունից կարևոր դրվագներ/5-7տող/	Աղայան, Թումանյան, Խնկոյան, Հայրապետյան, Կապուտիկյան, Կոր յուն, Մուրադյան, Սարգսյան, Պառնասյան, Խաչատրյան, Սահակյան
2. Ի՞նչ հետաքրքիր փատեր գիտես նրանց մասին, երբ նրանք քո տարիքում էին /կամ դեռահաս տարիքում/	Օգտվել համացանցից՝ «Հետաքրքիր փաստեր մեր մեծերի մասին»
3. Գրի՛ր հեղինակների ուղերձները կամ կարգախոսները՝ ուղղված հայ մանուկներին կամ ժողովրդին /1-2 կետ/։	«Ինքնուրույն ընթերցանություն» /1-4-րդ դասարաններ/ « Քրեստոմատիա Մայրենի 1-4 »
4. Կազմիր հեղինակների ստեղծագոր ծությունների անվանացանկ	Դասագրքից, արտադասարանային, գեղարվեստական գրքերից կամ այլ աղբյուրներից
5. գրել 2-3 ասույթներ հեղինակների կողմից 6, գրել 2-3 ասույթներ հեղինակների մասին	Օգտվել դասարանի ցուցապաստառներից կամ համացանցից

Հիմնական փուլ(II-III շաբաթ). 2-րդ շաբաթվա ընթացքում կենտրոնները, նախագծի հարցաթերթիկով առաջնորդվելով, հավաքած տեղեկություններն ու տվյալները ներկայացնում են ուսուցչին։ Վերջինս կատարում է դիտարկումներ, պարբերաբար կենտրոնների պատասխանատուների հետ հաղորդակցում է, ուղղորդում նրանց աշխատանքը։

Երրորդ շաբաթվա ընթացքում ուսուցիչը կազմակերպում է կոլեկտիվ աշխատանք /լ/նկ՝1/։ Յուրաքանչյուր աշակերտի բաժանվում է հեղինակների լուսանկարները, հավաքած տեղեկություններն ու տվյալները՝ արդեն համակարգված, թղթային տարբերակով /համակարգչով հավաքած/։ Աշակերտները դրանք հավաքում են գունավոր թղթերի վրա /տեխնոլոգիայի դասին նախօրոք աշխատել են՝ կատարելով համապատասխան ծալվածքներ և կտրվածքներ/։ Աշակերտների հետ զուգընթաց աշխատում է ուսուցիչը՝ աշխատանքը փակցնելով ցուցապաստառի վրա, իսկ երեխաները՝ գործնական ալբոմների մեջ։ ԳԱ շարունակվում է տանը՝ ստանալով լրացուցիչ տնային աշխատանքներ/պատկեր՝ 1-11/։

- ✓ Ծալվածքների բաց թողած տեղերում գրել տրված հեղինակի որևէ ստեղծագործությունից մի քառատող,կամ բնագրից քո սիրած տողերը, կամ հանելուկ, կամ այդ նյութին վերաբերող առած-ասացվածքներ և սովորել անգիր կամ ընթերցել՝ պահպանելով կարդալու որակական հատկանիշները։
- ✓ Ստեղծագործություններից ընտրել ցանկացած հերոսի և հաջորդ օրը ներկայանալ փոքրիկ բեմադրությամբ։

Հիմնական փուլի աշխատանքները շարունակվում և ավարտվում են 3-րդ շաբաթում. հաջորդ օրը սովորողները ներկայանում են խմբերով՝ կենտրոններով / յուր. խմբում՝ 8 աշակերտ /։

Հետազոտողների կենտրոնի աշակերտները ընթերցում են մանկագիրների կենսագրականից ընտրած համառոտ տվյալները, որոնք պարտադիր պետք է իմանա կրտսեր տարիքի դպրոցականը։ Այդ կենտրոնի աշակերտները ներկայացնում են նաև հեղինակների կարծիքներ, ուղերձներ և նրանց ուղղված դրվատանքի խոսքեր, մտքեր։

Բացահայտողների կենտրոնի աշակերտները ընթերցում են «Հետաքրքիր փաստեր» բաժնում տեղ գտած փաստերը հեղինակների կամ նրանց ստեղծագործությունների ստեղծման մասին։ Ընթերցում են նաև հեղինակների ստեղծագործություններից ընտրած ցանկեր, որոնց մեջ ընդգրկված են նաև ծրագրից դուրս ծանոթ նյութեր։

Ստեղծագործողների կենտրոնի աշակերտները ընթերցում կամ արտասանում են նկարազարդված թերթիկներով քառատողեր, հանելուկներ, սիրված հատվածներ, առած-ասացվածքներ, և դրանք տեղադրում ցուցապաստառի վրա։ Ի դեպ, այդ խմբի աշակերտները միտումնավոր են ընդգրկվել՝ դերասանական մեծ շնորհք դրսևորելու նպատակով։ Նրանք բեմադրություններով են հանդես գալիս՝ ներկայանալով մի շարք հերոսների անուններով /Կկու, Սիզախոտ, Գլուխ, Թութակ, Անբան Հուռի, Ածան հավիկ, կախարդ Նունեն, Մարդը, Առյուծը, Աղվեսը, Ագռավը և այլն/։

Գրավոր աշխատանքի կենտրոնի աշակերտները ներկայացնում են իրենց կարծիքները գրավոր տեսքով՝ ուղղված նշված հեղինակներից յուրաքանչյուրին /թերթիկների լուսանցքները նախօրոք տանը նկարազարդել էին/։ Հիմնականում որպես նախաբան սկսվում են հետևյալ տողերով, օրինակ՝

- « Եթե հանդիպեի իմ շատ սիրելի Սուրեն Մուրադյանին, ... »
- « Սիրելի՛ Անահիտ, ես շատ կուզենայի ինձ էլ սովորեցնեիր այդ հրաշք արհեստը,. . . . . » և այլն։

Գրավոր աշխատանքները փակցվում են ցուցապաստառի վրա։

Փաստ է, որ խմբային աշխատանքը մեծ տարածում ունի ժամանակակից դպրոցներում։ Խմբային աշխատանքի խոցելի կողմերից մեկն այն է, որ առանձին աշակերտներ «թաքնվում են» խմբի հետևում։ Նման իրավիճակում կիրառում եմ ***«Ես- դու- մենք» հնարը***։ Յուրաքանչյուր աշակերտի առաջարկում եմ խմբային աշխատանքի վերջում ներկայացնել սեփական ներդրումը խմբի աշխատանքում, խմբի մյուս անդամների ներդրումը և ընդհանուր խմբի աշխատանքի որակը։

Հիմնական փուլի 3-րդ շաբաթվա 3-րդ օրը դասարանն անցկացնում է գրադարանում /***շրջագայության մեթոդ/:*** Դասվարի ուղղորդությամբ աշակերտները ընթերցասրահում՝ սեղաններին շարված գրքերը դասավորում են ըստ հեղինակների։ Այնուհետև խմբերից առանձնանում են ամենաընթերցավարժները /յուր. խմբից՝ 3-ական հոգի/, ովքեր կատարում են գրադարանավարի առաջադրանք-մրցույթը. դասավորված գրքերից ընտրում է 4-ը, որոնց մեջ էջանիշերով առանձնացված են տեքստեր։ Աշակերտները, մեկը մյուսին հաջորդելով, կարդում են բարձրաձայն՝ պահպանելով կարդալու որակական հատկանիշները։ Կատարվում է կարդացածի շուրջ թռուցիկ քննարկում և մեկնաբանում։

Դասվարը գրադարանավարի հետ հետաքրքիր անակնկալ էր պատրաստել, որից երեխաները շատ ուրախացան. դասվարը բոլորին նվիրում է գրքեր(տես՝ լ/նկ՝ 2)։

Հիմնական փուլում է ընդգրկված նաև էքսկուրսիա դեպի Հովհ. թումանյանի անվան թանգարան, որտեղ աշակերտները ցուցաբերեցին բարձր մակարդակի իմացություն՝ հարուստ գիտելիքներով լի աշակերտների արտահայտած յուրաքանչյուր միտք և խոսք ***/Մտագրոհ մեթոդ/:***

Եզրափակիչ փուլ / IV շաբաթ / ուսուցչի դերը այդ փուլում.

- Օգնում է աշակերտներին ամփոփելու, համակարգելու, աշխատանքը ներկայացնելու հարցերում:
- Գնահատում է աշակերտների աշխատանքները՝ կիրառելով խրախուսման տարբեր միջոցներ:
- Անդրադարձ է կատարում աշխատանքի ողջ ընթացքին՝ հատուկ տեղ հատկացնելով սովորողների զգացողություններին:
- Ուսումնասիրությունների ամփոփ արդյունքները տեղադրում է դպրոցի կայքում:
- Հատուկ ուշադրություն է դարձնում ցանկացած քննարկումներին:
- Խուսափում է ավելորդ խտրականությունից, վերամբարձ ու պաթետիկ ոճից, ապահովում է՝ քննարկվող իրադարձությունները լինի սովորողների համար շատ հասկանալի և ուսանելի:
- Թեմատիկ նյութերն անցնելիս կամ ինքնուրույն ընթերցանության դասերին օգտագործել ԳԱ ինքնաշեն ալբոմները՝ է՛լ ավելի հարստացնելով գիտելիքներն ու զարգացնելով կարողություններն ու հմտությունները:
- Քննարկվում է միջառարկայական կապը ամբողջ աշխատանքի ընթացքում:

Եզրափակիչ փուլի շրջանակում կատարվում է ամփոփիչ աշխատանք.

- ❖ Նախագծային գործունեության վերջնարդյունքների ամփոփում
- ❖ Խմբի յուրաքանչյուր մասնակցի աշխատանքի ինքնագնահատում:

Ինքնագնահատման 34 թերթիկը բաժանվում է աշակերտներին, որպեսզի ինքնուրույն գրեն իրենց մտքերն ու կարծիքները.

ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ

1. Ազգանուն, անուն----------
2. Ես աշխատեցի հետևյալ թեմայի շուրջ----------
3. Մեր խմբում ամենաակտիվ մասնակիցը----------
4. Նախագծիշուրջ աշխատանքի ընթացքում ես իմացա----------
---
5. Ամենադժվարն այն էր, որ----------
---
6. Ամենահետաքրքիրն այն էր, որ----------
---
7. Ես եզրակացրի, որ----------
---
8. Ես կառաջարկեի, որ----------


ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ՝
« ՄԵՐ ԱՆՑԱԾ ՆՅՈՒԹԵՐԻ
ՀԵՂԻՆԱԿՆԵՐԸ »


ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ
/1869-1923/
Ծննդավայրը՝ Հ.Հ. Լոռի, Դսեղ գյուղ,
1869թ. 19-ը փետրվարի
Ամենայն հայոց մեծ բանաստեղծ,
մանկագիր, հեքիաթագիր, հայրենասեր,
խաղերի հեղինակ, մեծ ընտանիքի հայրիկ,
ուրախ, ընկերասեր մարդ,
բոլոր երեխաների համար մտահոգ մարդ,
ընթերցասեր, բարձրաճաշակ մարդ,
տաղանդաշատ թարգմանիչ, հասարակական գործիչ
գրքերի և գեղեցիկ իրերի խանութների հաճախորդ
Սասունի Դավիթ
Հեռանալով երամ գերից
Գնա աղջիկի ագուռ դրդին,
Իր ձին հենած ու փոքրդիկ,
Խաղալ, շղալ Թոր Հովսեփին:




Հայ գրող, մանկավարժ, հրապարակախոս,
Հեքիաթագիր, մանկագիր
Ծննդավայրը՝ Վրացական նահանգ, գ. Խաչեն
Շուրջ 40 տարի մանուկները գրաճանաչ
են դարձել Աղայանի ստեղծած
«Ուսումս մայրենի լեզվի» դասագրքով:
Աղայանն իր մանկությունն ու պատանեկությունը
մանրամասն նկարագրել է իր «Արություն և Մանվել»
վեպի մեջ, որի Արությունը հենց նա է:
ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԱՆ
/1840-1911/
Ղ. Աղայանի անունն է կրում թիվ 63 դպրոցը,
Երևանի փողոցներից մեկը,
ունի տուն- թանգարան:


Ղ. Աղայանն իր մասին ասել է.
1. Մեր հեքիաթները Հայաբնակ Հայաստանի մեջ բաղդ ունեն, մեր իրականության մեջ բաղդ չունեն:
2. Հարգ. Թումանյան մեծագ. երգողը մի հոյակապ մարդ էր ու ամբողջ գրողներից ոչ մեկին և չի՛ հոգ:
3. Ղ. Դանիելյան «Մեր գրողներից ոչ մեկին և չի՛ հոգ: Սոկերենցին խոսել ու միրել մարդերի մանկավարժ մտ. Հոգին Հերկար տարիների մանկավարժ Հոգեբանորեն իրեն կոչված համարեց լինել Ժողովրդական ուսուցիչ»:

Պատկեր՝ 1,2


ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆ
/1919-2006/
Սիլվա Կապուտիկյան
1919-2006
Հայ գրող, բանաստեղծուհի,
արձակագիր, հրապարակախոս,
հասարակական գործիչ:
Ծննդավայրը՝ Երևան, Կանից զաղթած ընտանիքում:
Հայրը՝ Բարունակ Կապուտիկյան /ազգային գործիչ/:
Մայրը՝ հաշվապահ հրուշակեղենի գործարանում
Ամուսինը՝ Հովհ. Շիրազ
Որդին՝ Արա Շիրազ / ՀՀ քանդակագործ /
Արժանացել է բազմաթիվ կոչումների:
Պարգևատրվել է բազմաթիվ մեդալներով ու շքանշաններով:


Ստեղծագործությունները՝ բանաստեղծություններ, հուշագրեր, հոդվածներ, թարգմանություններ:
60-70 զիրք՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն, վրացերեն, լիտվերեն, ուկրաիներեն, թուրքերեն և այլ լեզուներով:
Ունի մանկական ստեղծագործությունների մոտ 40 հրատարակություն:
1. Գեղեցմանը գտնվում է Կամիտասի անվան պանթեոնում, որտեղ ամեն տարվա մեյանեթերի վերջին շաբաթ օրը կազմակերպվում է նրա անվան պոեզիայի օր:
2. Բանաստեղծուհու ապրած տանը բացվել է նրա տուն-թանգարանը /հասցեն՝ Ս. Կապուտիկյան փ. 26/
3. Մոր տանից հետո նա ապրել է մորաքրոջների հետ
Հայտնի բանաստեղծություններ և ժողովածուներ.
Փոքրիկ Արա, ականջ արա
Հայոց լեզու, Իմ հայ լեզու
Խոսք իմ որդուն
Երևանի հին պանթեոնում
Այն ո՞վ է ասում
Հայոց աշխարհ, հայոց երկիր, հայոց հող
Հող հարենի
Դեռ հավատա
Կացինն ու ծառը
Դարձյալ ժողովրդիս
Ղարաբաղի քարքառը
Երգ մեր քարերի մասին
Գնացքը: Արջուկ: Իմ գրադարանը:
Խնձորը: Մուկը: Կարծում եք, թե կատա՞կ է


ԱԹԱԲԵԿ ԽՆԿՈՅԱՆ
ԽՆԿՈ ԱՊԵՐ
/1870-1935/
Հայ գրող, մանկագիր, վաստակավոր ուսուցիչ, թարգմանիչ տաղանդավոր առակագիր
Ծննդավայրը՝ ՀՀ Լոռու մարզ, ք. Սպիտակ, գ. Խնկոյան
Աղայանից ու Թումանյանից հետո Խնկոյանը համարվում է մանկական լավագույն գրողներից մեկը:
Նրա անունով է կոչվում Երևանի քաղաքային մանկական Գրադարանը, Գյումրիի դպրոցներից մեկը:
1. „Խնկո Ապեր, մտերմիկ անունով շատ տարիներ առաջ նրան կնքեցին մի խումբ հայ գրողներ և մանկավարժներ:
2. Երկար տարիներ անընդմեջ աշխատել է որպես ուսուցիչ և եղել է մայրենի դասագրքերի հեղինակ /«Մեր դպրոցը», «Կարմիր արև»/:
3. Խնկո Ապերը զվարթ ու կատակասեր մարդ էր, սիրում էր հանպատրաստից կատակներ անել: Նրա սրամտությունը արտահայտվել է նաև իր ստեղծագործություններով, որտեղ նա հումորի միջոցով ծաղրում է մեծամտությունը, ժլատությունը,ագահությունն ու շողոքորթությունը:
Խնկոյանի հայտնի ստեղծագործություններից են.
1. Գյուղացին ու արջը
2. Գող մաքին
3. Միտն ու որբերը
4. Փեսացու մակը
5. Մարդն ինչով է ճամփորդում
6. Մոծակը
7. Գիրքը
8. Պապն ու շաղգամը
9. Ծաղկաց ծովը
10. Օրիորդակին
11. Ագվեսն ու արջը
12. Կի-կի-լի-կի
13. Կռունկն ու աղվեսը
14. Նապաստակի տունը
15. Թիստաները
16. Մկներն ինչպես կռվեցին կատվի դեմ
17. Խոզն ու ագռավը
18. Գայլն ու գառը
19. Մկների ժողովը
20. Բկլիկ Ակնիկ Մեղուն
21. Հպարտ աքլորը և այլն
Ստեղծագործությունները՝ բանաստեղծություններ, պոեմներ, բանաստեղծություններ, առակներ, հանելուկներ, հեքիաթներ, էպիգրամներ, թարգմանություններ, վիպասություններ:

Պատկեր՝ 3, 4


ՍՈՒՐԵՆ ՄՈՒՐԱՂՅԱՆ
/1930-2020 /
– Իսկ արգելն ինչո՞ւ
Ջի հանում՞ երբեք
Ձեռնոց ու Տիգրակ:


Ս. Մուրաղյանն ասել է՝
1.«Աշխարհն իմ պատկերացմամբ կանգուն է չորս բարոյական սյուների վրա՝ սեր, հավատ, բարություն, աշխատանք: Փորձիր կտրել այդ սյուներից մեկը, և առաստաղը փուլ կգա, ու մնձ ադետ կպատահի»:
2. «Ես իմ կյանքն ապրել եմ ոչ թե ուրագի նման՝ «միշտ դեպի քեզ», այլ սղոցի նման «մին դեպի քեզ, մին դեպի մեզ» »:
3. «Մանկագիրը մի առավելություն ունի: Մեր ընթերցողները նախ շատ են, և երկրորդ՝ նրանք ամենաանկեղծն են: Իսկ մանկական գրողի կոչման առանձնահատկությունը գարմանալու հատկությունն է՝ մանկան նման զարմանալ, սիրել, մաքուր, զարմացած, գեղեցիկ աչքերով նայել կյանքին, մարդկանց»:
Ս. Մուրաղյանի մասին ասել են՝
1. ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆ՝ «Սուրեն Մուրաղյանը 7-ից 70 տարեկան ընթերցողների տաղանդավոր բանաստեղծն է»:
2. ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆ՝ «Իմ աչքի առաջ դու հասունացար, Դարձար մանուկների ամենափնտրված բանաստեղծը: Իզուր չէ, Որ դու մնձ թռումանյանի հողից ես ծնվել: Քո բնավորության ու Բանաստեղծությունների մեջ զգում եմ թռումանյանական Պարզությունն ու անմիջականությունը: Դու հայ մանկաշխարհի Սիրված բանաստեղծն ես, մեր գրականության անխոնջ ու Անկեղծ եվիրյալը»:


Հայ բանաստեղծ, արձակագիր, մանկագիր
Ծննդավայրը՝ ՀՀ, Լոռու մարզ, գյուղ Վահագնի
Լ. Սարգսյանը բազմաժանր գրող է, հեղինակ
բանաստեղծությունների, տրիպտեսների,
պատմվածքների, վիպակների:
Ստեղծագործությունները հասցեագրված են
մեծահասակներին, պատանի և մանուկ
ընթերցողներին: Ունի պարգևներ:
ԼԻՊԱՐԻՏ ՍԱՐԳՍՅԱՆ
/ ծնվ.1938 թ. /


Հոսպին փարիկներ
Ջաղ ու գրպով, գրդրվելով
Դիսար կոդի, թեանցով
Գրաբիկներդ ծամեիս բնկան
Օրի մեզով կամանցով:
ՀԱՅՐԱՊԵՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
/1874 – 1962 /
Հայ բանաստեղծ, արձակագիր, մանկագիր, թարգմանիչ,
վաստակավոր ուսուցիչ
Ծննդավայրը՝ Նախիջևանի շրջան, գյուղ Տանակերտ
Շուրջ 40 տարի ուսուցչություն է արել հայրենիքում և
հայրենիքից դուրս: Ուսուցանել է հայերեն, մանուկների
մեջ սերմանել է բարին ու գեղեցիկը: Հայկական դպրոցների
համար կազմել է մայրենի լեզվի դասագրքեր:


ՅՈՒՐԻ ՍԱՀԱԿՅԱՆ
/1937 - 2019/
բանաստեղծություններ, որոնց հիման վրա էլ ծնվում էին երգեր»:


1. Արփա-Սևան
2. Այլ աչեր
3. Շարունակիր ժպտալ
4. Կյանքն անցողիկ է
5. Նամակ ռազմաճակատից
6. Խուտուտ- մուտուտ
7. Հովիկ-հովիկ
8. Չքներ, տղաներ
9. Ծաղրածուն և ծաղրածուն
10. Երեք լոբի
11.Երեք փչակ, երեք թռ
12.Ածան հավիկ
13. Օրորոցային
14.Երկիր իմ Հայաստան
15.Լուսաբաց
16.Ցնծա, Արցախ աշխարհ
17. Մայր հայրենիք
18.Նորից ուտքի, նորից առաջ
19. Ձին ծակեցին, պատը տարան
20. Մրջյունը
21.Քեֆ անողին՝ քեֆ չի պակսի
22. Առվակն ու գետը
23. Կեցցե մուկը, կեցցե կատուն
24.Հոպոպ
25.Կռունն ու ճուտը
26.Թռչնակի երգը
ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ՄԱՍԻՆ ԱՍԵԼ ԵՆ
1.Ց. Սահակյանը հայ տեսակի իմաստնությունն իր մեջ ամբարած մեծ վարպետ է: Ամբողջ կյանքում հավատարիմ մնաց իր գոյատեսակին, դավանանքին և արարչատուր հոգացումներին:
2.ԼԻՊԱՐԻՏ ՍԱՐԳՍՅԱՆ՝ «Բյուրեղյա հոգու տեր բանաստեղծ է Իմ գյուղբայրը: Եղել եմ հանրապետության շատ դպրոցներում, զրուցել աշակերտների և ուսուցիչների հետ ու նկատել, թե ինչ ջերմությամբ են ընդունում նրա բանաստեղծությունները, յուրաքանչյուր բառն ու խոսքը: Աստված նրա մեջ չարության ոչ մի կաթիլ չէր դրել, և զարմանալի չէր, որ այդ հոգուց ծնվում էին երեխաների հոգիներին հարազատ, գուլպ ու խորիմաստ բանաստեղծություններ, որոնց հիման վրա էլ ծնվում էին երգեր»:

Պատկեր՝ 5, 6, 7,8









Պատկեր՝ 9,10,11

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով՝ տարրական դասարաններում կիրառելով ***գործնական աշխատանք*** բաղադրիչը, որի մեջ ընդգրկվում է **հետազոտական-նախագծային գործունեությունը,** նպաստում է սովորողի երևակայության, դիտարկման, վերացական մտածողության, խոսքի, հիշողության, նախաձեռնողականության ու հաղորդակցական կարողությունների ձևավորմանը:

Հետազոտական աշխատանքի գլխավոր արդյունքներն են.

- սովորողի ինքնուրույնության մակարդակի բարձրացումը/հետազոտել, բացահայտել, նախաձեռնել, համագործակցել. . . . . /,
- ստեղծագործական ներուժի բարձրացումը,
- ստեղծագործական կարողությունների զարգացումը՝ նկարելու, ստեղծագործելու, շարադրելու կարողությունը և այլն,
- արժեքային համակարգի ձևավորումը՝ սովորողի բոլոր զգացողություններով հանդերձ:

Ծավալելով հետազոտական գործունեություն՝ սովորողները բացահայտում են նորը և հասկանում, որ յուրաքանչյուր մարդ կարող է սովորել երևակայել ու երազել, հորինել ու ստեղծել: ՀԱ զարգացնում է համագործակցային կարողությունները: Արդյունքում սովորողները դառնում են ազատ, ակտիվ, ինքնուրույն: Տեղին է գնահատել և առաջնորդվել ուսուցչին ուղղված հետևյալ կարգախոսով.

Աշակերտին սովորեցրու աշխատել, նրան ստիպիր ոչ միայն սիրել աշխատանքը, այլև այնքան նրան հարազատանալ, որպեսզի այն դառնա նրա երկրորդ բնավորությունը, սովորեցրու նրան այն բանին, որ նրա համար աներևակայելի լինի այլ կերպ, քան սեփական ուժերով որևէ բան յուրացնելը, որ նա ինքնուրույնաբար մտածի, որոնի, իրեն դրսևորի, զարգացնի իր ենթադրյալ ուժերը, իրենից մշակի անսասան մարդու:

Ադոլֆ Դիստերվեգ

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Կ. Թորոսյան, Կ. Չիբուխչյան Գործնական աշխատանքները մայրենիից, Զանգակ 2012

Գ. Բեղիրյան, Մ. Մանուկյան Մաթեմատիկայից գործնական աշխատանքներ Աստղիկ գրատուն, 2012

Ե. Ջիլավյան Դասախոսություններ /վերապատրաստման դասընթացներ - 2022/

1. Գործնական, նախագծային աշխատանքների կազմակերպումը ուսումնական առարկայի շրջանակում
2. Դասավանդման ժամանակակից մոտեցումները, մեթոդները և ռազմավարությունները ուսումնական առարկայի համատեքստում
3. Սովորողների ճանաչողական հմտությունների, գործնական հմտություններ ձևավորող և ստեղծագործական մտածողությունը զարգացնող առաջադրանքների ձևավորումը
4. Միջառարկայական կապերի օգտագործումը և ինտեգրված դասերի կազմակերպումը
5. Միավորային և ձևավորող գնահատման եղանակները: Սովորողների արժեհամակարգի ձևավորումը